ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սպիտակի 1

№ 4032-Ա « 02 » հոկտեմբերի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ
ՈՒԶԲԵԿՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ՏԱՇՔԵՆԴ
ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով և հիմք ընդունելով աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության պետի տեղակալ, վարչության պետի պարտականությունները կատարող Նարեկ Գրիգորյանի 01.10.2025 թվականի Ն/57939-25 գրությունը՝ Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային խմելու ջրի և սանիտարական ծառայությունների առաջին համաժողովին մասնակցելու նպատակով.

1. Երևանի քաղաքապետարանի պատվիրակությանը՝ 2025 թվականի հոկտեմբերի 5-ից 9-ը ներառյալ գործուղել Ուզբեկստանի Հանրապետության մայրաքաղաք Տաշքենդ՝ հետևյալ կազմով.

Սերգեյ Ամրոյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության կենսաապահովման բաժնի գլխավոր մասնագետ
Արմեն Համբարձումյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության կենսաապահովման բաժնի առաջատար մասնագետ

2. Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվում են 2025 թվականի Երևան քաղաքի բյուջեի միջոցների հաշվին:

3. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության կենսաապահովման բաժնի գլխավոր մասնագետ Սերգեյ Ամրոյանի բացակայության ընթացքում գլխավոր մասնագետի պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության կենսաապահովման բաժնի առաջին կարգի մասնագետ Սուսաննա Հարությունյանին:

4. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության կենսաապահովման բաժնի առաջատար մասնագետ Արմեն Համբարձումյանի բացակայության ընթացքում առաջատար մասնագետի պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության կենսաապահովման բաժնի առաջին կարգի մասնագետ Արա Կարախանյանին:

5.Գործուղումից վերադառնալուց հետո, 3 աշխատանքային օրվա ընթացքում, փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը և դրանք հավաստող

փաստաթղթերը ներկայացնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ